

նպաստ չ'ըներ նաեւ կրթութեան հետ ստացուած քնքոյշ կեանքը, մեծամեծ շոպյուծիւնք եւ վաճառականութեան հետ կապուած նիւթական վշտակեցութենէ սոսկալն: Եւ սակայն մինչեւ ցայսօր Պուքովինայի առանձնական մեծ կալուածատեարց երրորդ մասը կը կազմեն Հայերն:

Այն սովորութիւնը՝ զոր ունէին Հայք առեւտուր ըրած ժամանակ, այն է՝ ծախողին կամ գնողին ձեռքը գրեթէ բռնաբար ճմլել եւ վերջէն միւս ձեռքով վրան զարնել, յաճախողին համակրութիւնը վաստրկելու համար, նաեւ ուրիշ ազգաց քով՝ ի մասնաւորի Պուքովինայի Ռումէններու քով, մոռտ գտած է, եւ ցայսօր կայ, իբրեւ յիշատակ այն օրերու՝ երբ Հայք երկրին բովանդակ առուտուրն ձեռք անցուցած էին:

Սուչավայի Հայոց բնակարանները — ինչպէս նաեւ իրենց թաղին փողոցները — մաքուր են, եւ սովորաբար լայն, եւ թէ՛ արեւելեան ոճով երկայն «եփէններով», եւ թէ՛ նորագոյն կարասեօք լաւ կահաւորուած են: Տներու յատակագիծը գրեթէ միշտ քառակուսի է, բաւական բարձր, սովորաբար պարտիզի մէջ, սուր եւ սեպ տանիքով, եւ մոլորաւեան ոճով՝ տան շուրջը փայտեղէն անցք մը կ'ըլլայ, եւ կամ — եւ այս գրեթէ միշտ — ունին փայտէ կամ քարէ սիւներով յարկի տակ՝ տան առջեւ բաց տեղ, ուր տաք օրերուն կէսօրէն ետեւ թաւամաղ տանտէրը՝ մէկ քանին նաեւ արեւելեան երկայն եւ բազմամալ հանդերձից մէջ փաթթուած՝ իւր